



ԺԷ ՏԱՐԻ, ԹԻԻ 10

1859

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մոսկովայի քաղաքի քաղաքացիական պարզեցման խորհուրդի անդամները :

Առաջին զույգ և գեղեցիկ օրերն որ ա մանուկային սպառնացուցիչ տաքերէն վերջը բոլոր բնութեան վրայ զուարթութիւն և ուրախութիւն կը բերեն, քաղաքականացեալ աշխարհքին ամէն կողմերն ընտրուած են ի մասնաւորի իբր աւուրք խնդալի և յուսալից հանդէսներու կատարման, յորում լրագիրք՝ որ քաղաքականութեան մեծամեծ խնդրոց վրայ կը խօսին՝ այն միջոցին իրենց էջերը կը նուիրեն այնպիսի հանդէսները նկարագրելու մանրամասնաբար : Բայց մեծ ուրախութեան օրերն մեծ և պղծ տիկ դպրատանց քննութեան և պարգևաբաշխութեան օրերն են, յորում մանկունք իրենց բոլոր տարեկան աշխատութեանց պտուղն կը վայելեն : իրենց ծնողաց և ազգականաց գիրկն թափելով,

իբրև պտղալից տուններ, իրենց քրտինքովն և քաջութեամբ վաստակած պատկերները յորում ծնողք և ազգայինք հաւասարապէս կ'ուրախանան : Ծնողք իրենց երկանց ապագայ երջանկութեան երախայրիքը տեսնելով : ազգայինք այն մատաղ տիոց վրայ ազգային յուսոյ աստղին փայլերուն վրայ խնտալով :

() Գոստոսի 11^Է մեզի ալ ուրախութեան և ակնկալութեան օր մը եղաւ, երբ եւրոպացի քաղաքականացեալ մեծ ազգի մը կեդրոնը կեցած, բոլոր ազգակից գաղթականներով օտարաց խրախուսական աչքերու դիմաց տեսանք մեր Սուրբատեան Սարգսիւնին աշակերտաց սլսակուիլը : Սոյն օրը կրկին ուրախութիւն մըն ալ էր մեզի ճոխացեալ ազգային և պատմական յիշատակով,

կօք . վասն զի նոյն օրը կը բոլորէր մեր
Հայկ նահապետէն դրուած 4351 տա-
րեզուխը , որ թէպէտ ժամանակին փո-
փոխութեամբը և ազգային դիպուա-
ծոց յաջորդութեամբ արդ անգործա-
դրելի՝ բայց ազգային հնախուզից դի-
մաց պատուական և հետաքննութեան
արժանի դիպուած :

Հանդիսին նախագահ նստաւ Պ .
Ղայլըր Ղաղղիոյ Ս արժողին անդամը ,
որ արեւելք և արեւմուտք իր աշխարհա-
կան ճամբորդութեան գրքերովը շատ ա-
նուն հանած է . հանդիսակից էին՝ Վա-
զիմէֆէնտի () սմանեան Ղարան արտա-
քին գործոց պաշտօնեայ վսեմ . Գուստ
փաշային որդին , Վաճիկեան Յակոբ է-
ֆէնտի () սմանեան դրան Ղարիզ նըս-
տող գործակատարը , և ուրիշ շատ ազ-
գային և գաղղիացի հրաւիրեալք : Հան-
դէսն սկսաւ զինուորական երաժշտութե-
ք , և մինչ հրաւիրեալք բազմեցան , Ս ար-
ժարանին յարգոյ Ս երատեսուչը գաղ-
ղիական լեզուաւ համառօտեց այս Հայ-
կայ թուականին պատմութիւնն , պատ-
ճառն և իրեն պարբերութիւններն՝ լի
հետաքննին և ազգասէր տեղեկութեք ,
որն որ ազգային գիտութեան հարկաւոր
և արժանի բան ըլլալով՝ օրագրիս մի-
ջոցաւ հրատարակելու միտք ունինք :

Ս երատեսչին ճառէն վերջը՝ Վախա-
գահը պատասխան տուաւ Ս խիթա-
րեան Ս իաբանութեան ջանքն և աշ-
խատութիւնը յիշելով 160 տարիէ ՚ի
վեր ազգին օգտակար ըլլալու ՚ի կրօնս
և ՚ի յուսմունս . գովեց աշկերտներուն
ցուցուցած ջանքը , մասնաւորապէս գեղ-
արուեստից մէջ ըրած յառաջագիմու-
թիւննին , որոնց տարեկան երախայրի-
քը Ս արժարանին սրահներուն մէկուն
մէջ շարուած էին ՚ի տես հրաւիրելոց ,
և խրախուսեց զիրենք աւելի ևս ջանա-
լու ՚ի յառաջագիմութիւն յապագայս :

Ճառախօսութիւններէն վերջը ա-
շակերտաց վարուց և ուսմանց վիճակ-
ները կարգացուեցաւ , և ըստ իւրեանց
քաջութեանն ընդունեցան իրենց պսակ-
ները : Աշակերտաց մէջէն չորս հոգի
որ անցեալ տարուէն իրենց ուսման

ընթացքը լմնցուցած՝ միայն մասնաւոր
բաներու մէջ կատարելագործուելու հա-
մար մնացեր էին վարժարանիս մէջ ,
վերջին անգամ մ՝ ալ երեցան հանդի-
սիս մէջ , երթալու ապա խառնուելու
համար այն մեծ ծովուն մէջ՝ զորն որ
մարդկային ազգին աշխարհքն կ'անուա-
նենք , յորում պիտի ցուցնեն ինքզինք-
նին և պիտի տեսնուին ուրիշներէն .
այսինքն պիտի ցուցնեն թէ ինչ տար-
բերութիւն ունին իրենք անոնցմէ , որ
կրթութիւն առնելու բաղձն ու միջոցն
չեն ունեցած . պիտի տեսնեն ուրիշներն
ալ թէ ինչ է կրթութիւն առնողին և
չառնողին իրարմէ տարբերութիւնն :
Փափաքելի է մեզի և միանգամայն յու-
սալի որ այս երկու կողմանէ քննուին
և քննելն ըլլայ մեր ակնկալութեանը
համեմատ . կրթեալք իրենց դաստիա-
րակութենէն ընկալեալ քանքարն ա-
ղէկ շահեցնելով , քննողք ալ օգնելով
իրենց ըստ կարի և խրախուսելով որ
նորամուտքն յաշխարհ քաջալերուին ի-
րենց առաջին քայլերուն մէջ , և օգտա-
կար ըլլան իրենց ընտանեացն և ազգին ,
որ է միակ վախճան վարժարանաց :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՅՔ

Լուութիւնն ու խօսակցութիւնը հաւասարա-
պէս հարկաւոր են մտածութեան զարգացման
համար : Լուութեան մէջ կը ծնանի անիկայ , խօ-
սակցութեամբ ալ կը կատարելագործուի , կը յղ-
կուի ու վերջին ձեռքը կ'առնէ : Մտածութիւնը
անկին կը նմանի , որ գէպ ՚ի հոգուն խորերը մը-
թուն մէջ կ'երկնցնէ իր արմատը , և միանգա-
մայն լուսոյ ու մթնոլորտի կարօտ է ծաղիկ ու
պտուղ տալու համար :

Ոչ թէ անմահութիւնը , այլ մահը անըմբռնելի
բան մը կ'ըլլար , թէ որ նոր կենաց սկիզբ մը չը-
լար :

Երբոր մեռնողներու վերջին խօսքերը պարզ ու
սրտաշարժ խօսքեր են , մեծ ազդեցութիւն կ'ընեն :

Մեռնողը երկու աշխարհաց սահմանին վրայ
կեցած է : Անոր համար աղէկ դատաստան կ'ընէ
թողած աշխարհքին վրայ , և կը գուշակէ զմիւսն
ուր քիչ ատենէն պիտի երթայ :

ՓՐԵԴ . ԱՆՍԻՅԼԵՐՆ